



ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԼԱՆ

Համայնք: Վայք խոշորացված համայնք
Երկիրը: Հայաստան

Այցելեք մեզ և կդառնանք Ձեր ուղեկիցը ...

Ամսաթիվ 01.09.2018թ

ք. Վայք 2018թ.

Հարգելի հյուրեր, հարգելի վայրեցիներ,

Յուրաքանչյուր համայնքում հարմարավետ կենսակերպը պայմանավորված է բարեկարգ փողոցների և բակերի, գեղատեսիլ այգիների և պուրակների, մանկական խաղահրապարակների, մարզական և առևտրի կենտրոնների, փարբեր ենթակառուցվածքների առկայությամբ:

Վայքի համայնքապետարանի վերջին փարիների գործունեությունը ուղղված է համայնքային տնտեսության արդյունավետ կառավարման, համայնքային ենթակառուցվածքների կայուն և բնականոն զարգացման, միջավայրի բազմազանության, մեր համայնքի բնակչության կյանքի և գործունեության որակի բարձրացման չափանիշների ապահովմանը՝ համայնքի համաչափ զարգացման համատեքստում:

Վստահեցնում եմ ձեզ, որ հեղինակական աշխատանքի և համատեղ ամենօրյա ջանքերի շնորհիվ, մոտ ապագայում մենք կունենանք ավելի մաքուր ու բարեկարգ, զարգացած տնտեսությամբ ճանաչված համայնք:

Համայնքը 2017թ. օգոստոսի 8-ին միացել է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Եվրոպական Միության նախաձեռնությանը՝ նպատակ ունենալով մշակելու և իրագործելու համայնքի տնտեսական զարգացման պլանը, որն արդյունք է համայնքի բնակչության բոլոր շերտերի համատեղ ջանքերի:

Համայնքի ղեկավար Թ. Ավետյան

Պլանի օրինակն ստանալու համար, խնդրում ենք կապ հաստատել.

Անուն՝ Արամ Հովսեփյան , ՏՏՁՊ պատասխանատու

Պաշտոն՝ ՏՏՁ պատասխանատու

Հասցե՝ ք. Վայք, Շահումյան 18

Հեռախոս՝ 098661129

Ֆաքս՝ 028292838

Էլ հասցե՝ m4eginvayk@gmail.com

Կայք՝ www.vayk.am

2. Ամփոփագիր

Վայք համայնքի տնտեսական զարգացման ծրագիրը մշակվել է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը Վայք համայնքի ադամակցության շրջանակում: Ծրագրում ներկայացվում է Վայք համայնքի տնտեսության ներկա վիճակը, համայնքի ուժեղ և թույլ կողմերը, տնտեսության զարգացման հնարավորությունները և սպառնալիքները, ինչպես նաև առաջարկվում են գործողություններ, որոնք կհանգեցնեն համայնքի տնտեսության գերակա ուղղությունների զարգացմանը:

Ըստ ծրագրով սահմանված համայնքի զարգացման տեսլականի՝

Համայնքը գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն է, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և տարանցիկ զբոսաշրջության սպասարկման լայն հնարավորություններով:

Այս տեսլականին հասնելու համար համայնքը ծրագրով սահմանել է հիմնական նպատակներ, այն է՝

- Համայնքում ունենալ գրավիչ ներդրումային միջավայր
- Փոքր և միջին բիզնեսի զարգացում
- Մրցունակ գյուղմթերքների արտադրության աճ
- Համայնքում ապահովել կայուն զբոսաշրջություն

Համայնքն ունի գյուղմթերքների արտադրության և վերամշակման լայն հնարավորություն, նախատեսվում է պտղաբուծության և խաղողագործության մեջ մինչև 2021թ. ապահովել մինչև 40 մլն. դրամի ներդրումներ: 2018-2019թ. ԱՄՆ ՄԶԳ-ի և համայնքի համաֆինանսավորմամբ, գյուղատնտեսության և համայնքի բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման համար արդեն կատարվել է 200 մլն. դրամից ավել ներդրումներ: Նախատեսվում է նաև մինչև 2021թ. համայնքում գիշերակացի համար կանգ առնող զբոսաշրջիկների թիվը հասցնել 15000-20000-ի: Նախատեսվում է Հերիերի ջրամբարի հարևանությամբ ստեղծել տուրիստական հանգրվան, իր բազմապրոֆիլ հնարավորություններով, տարեկան ապահովելով մինչև 1000-2000 գիշերակացերով:

Հաշվի առնելով Վայքի համայնքային բյուջեի սահմանափակումները՝ գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվում է ներգրավվել նաև պետական բյուջեից, դոնոր կազմակերպություններից և մասնավոր ձեռնարկություններից ու կազմակերպություններից:

3. Բովանդակություն

1.	Ամփոփագիր	3
2.	Բովանդակություն	4
3.	Աղյուսակների, գծապատկերների և հապավումների	5
4.	Պլանի ներածություն	6
5.	Տեղական տնտեսական զարգացման պլանի մշակման գործընթացը	7
6.	Տեղական տնտեսության վերլուծություն	8
7.	SWOT վերլուծություն	20
8.	Տեսլական և նպատակներ	21
9.	Գործողությունների ծրագիր	1
10.	Հավելվածներ	1

4. Աղյուսակների, գծապատկերների և հապավումների ցանկ


- Աղյուսակ 1 Համայնքային տնտեսության առաջատար ճյուղերը..8
- Աղյուսակ 2. Մասնավոր հատվածի ընկերությունների ցանկը...9
- Աղյուսակ 3. Տեղական գործընկերության գնահատում....10
- Աղյուսակ 4 Զարգացման ոլորտները (ենթաօլորտներ) և նրանց խնդիրները...12
- Աղյուսակ 5. Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն13
- Աղյուսակ 6. Վայքի գյուղական բնակակալայրերի հողային ենթակառուցվածքները...14
- Աղյուսակ 7. Հողի և ենթակառուցվածքների նկատմամբ մասնավոր հատվածի կարիքները14
- Աղյուսակ 8Ա. Որակավորված աշխատուժի շուկայում առկա իրավիճակը..16
- Աղյուսակ 8Բ. Պահանջվող հմտությունների և զբաղվածության հնարավորությունների միջև հավասարակշռության ապահովումը տեղական մակարդակում. համակարգային վերլուծություն...17
- Գծապատկեր 1 Արտաքին դիրքավորման անհրաժեշտ քայլերի իրականացում...18
- Աղյուսակ 10. Համայնքի ընկալումը բնակիչների կողմից..18

Հապավումներ

- ՏԻՄ**- Տեղական ինքնակառավարման մարմիններ
- ՏՏԶՊ** - Տեղական տնտեսական զարգացման պլան
- ՓՄՁ ԶԱԿ** - Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
- ՀԿ** - Հասարակական կազմակերպություն
- ԱՎԾ**- Ազգային վիճակագրական ծառայություն
- ԳԱՀ** - Գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ
- ՈՒՎԿ** - Ունիվերսալ վարկային կազմակերպություն
- ՓԱՀ** - Փոքր աշխատանքային հանդիպումներ
- ՏՆԿ** - <<Տեխնոլոգիական նորարարական կենտրոն>>

5. Պլանի ներածություն

Համայնքի մասին



Մշտական բնակչությունը 6746

Համայնքի տարածքը 447 հա

Հեռավորությունը Երևանից 135 կմ

Զվարթնոց օդակայանից 146 կմ

Փոթի նավահանգստից 683 կմ

Եղեգնաձորից (մարզկենտրոն) 16 կմ

Ջերմուկից 38 կմ

Ծովի մակարդակից բարձրությունը
1200-1300 մ

Համայնքը կազմավորվել է 2016 թ, ՀՀ Վայոց ձորի Վայք քաղաքային և Ագատեկ, Արին, Զեդեա, Փոռ գյուղական համայնքների միավորումից: Ունի 2017-2021թթ զարգացման ծրագիր՝ հաստատված Վայք համայնքի 2016 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ: Նշված պլանային փաստաթղթերի հիմքում դրված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման տեսլականը: Տեղական տնտեսական զարգացման այս պլանը մշակված է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը մասնակցելու նպատակով, այն համահունչ է համայնքի զարգացման տեսլականին և համայնքի ընդհանուր զարգացման ծրագրերին: Ի տարբերություն վերջինիս, այն կենտրոնանում է մասնավոր հատվածի զարգացման վրա: ՏՏՁ պլանը մշակվել է քաղաքացիական հասարակության, գործարար համայնքի, ՏԻՄ մարմինների, փոքր աշխատանքային խմբերի /ՓԱՀ/ հետ երկխոսության և սերտ համագործակցության արդյունքում: Նրանք նաև պատրաստ են մասնակցել պլանի իրագործմանն ու վերահսկողությանը:

Սույն փաստաթուղթը կազմվել է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության ուղեցույցին համապատասխան: ՏՏ զարգացման պլանի իրագործման համար անհրաժեշտ ծախսերը մասնակիորեն կֆինանսավորվեն համայնքային բյուջեի կողմից: Ակնկալվում է նաև ֆինանսավորման միջոցներ ներգրավել տարբեր միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների կողմից համաֆինանսավորման, դրամաշնորհների տեսքով:

6. Տեղական տնտեսական զարգացման պլանի մշակման գործընթացը

ՏՏՀ պլանի մշակման գործընթացն իրականացնելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ներգրավելով ՏԻՄ-ի, ՔՀԿ-ի, ավագանու անդամների, Վայքի երիտասարդական կենտրոնի, տեղական արժեշտային մաս կազմող գործարարներից: Աշխատանքները համակարգել է Վայք համայնքի ՏՏ զարգացման պատասխանատու Ա. Հովսեփյանը:

Պլանի մշակման գործընթացը շրջանակում կազմակերպվել են քննարկումներ, հանդիպումներ Վայք քաղաքում, Արին, Փոռ, Ազատեկ, Զեդեա բնակավայրերում, Վայքի Զբաղվածության կենտրոնում, ՓՄՁ ԶԱԿ-ի Վայքի մասնաճյուղում, մարզային վիճակագրական կենտրոնում, տեղի գործարարների հետ: Առաջարկություններ և գաղափարներ են ստացվել շատերից՝ գյուղացիներից, տեղական գործարարներից, ֆերմերներից /Ֆերմերներ՝ Սենիկ Հարությունյան, Վահե Գրիգորյան, հյուրանոցի տնօրեններ Վ. Թովմասյան, Շ. Միքայելյան, Ռ. Ղազարյան, ՀԿ ներկայացուցիչներ Ա. Սաֆարյան, Խ. Մկրտչյան/: Կազմակերպվել է 7 փոքր աշխատանքային հանդիպումներ, մասնակցել են 60-ից ավել համայնքի բնակիչներ:

Աշխատանքային մթնոլորտում ուրվագծվել են համայնքի տնտեսական զարգացման ռազմավարական խնդիրները, նպատակները: Մշակվել է պարբերաբար հանդիպումների ժամանակացույց: Կազմվել է **հուշագիր համայնքային իշխանությունների, ՔՀԿ-ների, գործարար միջավայրի ներկայացուցիչների** հետ:

7. Տեղական տնտեսության վերլուծություն

6.1 Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն

Վայքի տնտեսությունը միատեսակ չէ: Մի կողմում մրցունակ, արտադրողական, արդյունավետ կազմակերպված մի քանի բիզնեսներն են, մյուս կողմում՝ ցածր տնտեսական մրցակցությամբ բազմաթիվ միկրո և փոքր բիզնեսներ: Մրցունակ ձեռնարկությունները կենտրոնացած են գինեգործության, այգեգործության, հիդրոէներգետիկայի ճյուղերում, հյուրանոցային, հյուրատնային ոլորտներում:

2017թ.-ից նկատվում է նաև հանքարդյունահանման ներդրումների ակտիվ աճ (նախատեսվում է 2018թ. կատարել մինչև 1.5 մլրդ. դրամի ներդրում. 300 աշխատատեղով): Ձեռնարկությունների մրցունակությունը ցածր է առևտրի, սննդարդյունաբերության, կենցաղային սպասարկման ոլորտներում, ինչպես նաև անասնապահության և հողագործության մեջ:

Վայք խոշորացված համայնքը Հայաստանում ճանաչված է գյուղմթերքների արտադրությամբ՝ մեղվաբուծությամբ, այգեգործությամբ /դեղձ, ծիրան, խնձոր, ընկույզ, նուշ/, բնական օղիների, թեյերի արտադրությամբ:

Զբաղված բնակչությունը ընդգրկված է հիմնականում գյուղատնտեսության՝ հողագործություն, անասնապահություն, այգեգործություն, կրթության, շինարարության, առևտրի և սննդի արդյունաբերության մեջ: Ըստ ԱՎԾ տվյալների Վայք համայնքում աշխատունակ բնակչության 62.2% /4167 մարդ/ զբաղված են եղել տնտեսության տարբեր ճյուղերում, որից 12.4% պետական, իսկ 87.6% ոչ պետական հատվածում:

Աղյուսակ 1 Համայնքային տնտեսության առաջատար ճյուղերը

Ճյուղի անվանումը	Համայնքում աշխատուժի զբաղվածության տեսակարար կշիռը տնտեսությունների ճյուղի մեջ
Ծառայություններ	62%
Գյուղատնտեսություն	10%
Առևտուր	10%
Շինարարություն և ճանապարհաշինություն	7%
Արտադրություն	5%

Համայնքի տնտեսության հիմնական շարժիչ ուժը համայնքով անցնող հանրապետության հյուսիսը հարավին կապող միակ միջպետական մայրուղին է: Մայրուղու երկայնքով հոսում է Արփա գետը, որի ափամերձ տարածքներում գործում են առևտրի, հանգստի, սննդի օբյեկտներ, հյուրատներ ու հյուրանոցներ: Տարեկան համայնքով անցնող ուղևորահոսքը 2017թ. կազմել է 420-680 հազար մարդ /ԱՎԾ տվյալներով/, որը 2016թ. համեմատությամբ ավելացել է 150-200 հազ. -ով: 2017թ. համայնքում 1-ից 5 օրով գիշերակաց են ապահովվել 4568 այցելու, որը 2016թ.-ի համեմատ ավել է 2000-2600 ուղևոր:

Գեղեցիկ բնության, Արփա գետի հարևանության շնորհիվ համայնքը մշտապես գրավել է զբոսաշրջիկներին ու մայրուղով անցնող ուղևորներին կանգառ, կամ որպես հանգստի գոտի: Համայնքում նախկինում կենտրոնացած են եղել արդյունաբերական խոշոր գործարաններ, որոնք այժմ անգործության են մատնված: Ի հակադրություն դրա պահպանվել և զարգացում են ապրել գյուղատնտեսական տարբեր ճյուղեր՝ մեղվաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը: 2008թ.-ի համեմատ հյուրանոցների /հյուրատների/ արագ սննդի կետերի թիվը համապատասխանաբար աճել է 12% և 20%-ով:

2018թ. զարգացում է ապրել մայրուղու երկայնքով ձգվող սպասարկման ոլորտի ձեռնարկությունները՝ արագ սնունդ /2010թ. համեմատությամբ 2-ից հասել է 11-ի/, հյուրատներ, հյուրանոցներ /2010թ. համեմատությամբ 1-ից դարձել է 5/, ավտոսպասարկման և ավտովազման կետեր /2-ից դարձել է 10/, սուպերմարկետներ /0-ից դարձել է 5/, կրպակներ /3-20/: Համայնքում գործում է 4 ռեստորան-հյուրանոցային համալիր, 4 գազալցակայան, 6 բենզալցակայան: Համայնքում առանձնանում է թեյերի և սառը ըմպելիքի, մեղրի, պանրի, չրերի, գինու արտադրությունը: Համեմատաբար մեծ շրջանառությամբ աչքի են ընկնում «Վայք Ֆրուտ» գինու, օղիների արտադրությամբ և չրերի վերամշակմամբ զբաղվող, տեղական հումքի վրա թեյերի արտադրությամբ զբաղվող «Մեզա Արարատ» ընկերությունները: Արդյունաբերության ոլորտում գործում է 3 կազմակերպություն, որոնց թիվը 1-ով նվազել է 2018թ.-ի նկատմամբ /քարերի վերամշակում գործում է 2-ը, ոչ թանկարժեք քարերի վերամշակում 2-ից նվազել է 1-ով/: Գործում է 4 շինանյութերի արտադրությամբ զբաղվող կազմակերպություն:

Համայնքում գործում է մեկ բժշկական կենտրոն, մեկ պոլիկլինիկա: Բացի բժշկական կենտրոնից, գործում են համայնքային ենթակայության 9 կազմակերպություններ՝ 2 մանկապարտեզներ, երկու դպրոց, մշակույթի տուն, մարզադպրոց, արվեստի դպրոց և այլն: Համայնքապետարանում և նրա ենթակայության տակ գտնվող ընկերություններում աշխատում է 150 մարդ, որը կազմում է ընդհանուր աշխատունակ բնակչության 8%-ը: Համայնքում գործում են նաև հետևյալ ոլորտներ մի շարք կազմակերպություններ՝ հանրային ծառայությունների մատուցում (12), տրանսպորտային ծառայություններ (2), անշարժ գույքի գործակալություններ (1), շինարարական (2), հանքարդյունաբերական և քարի վերամշակման (2) և այլն:

Ներկայումս տեղական տնտեսության զարգացման համար գերակա հնարավորություն է Հերիերի ջրամբարի հարևանությամբ տուրիստական գոտու կազմակերպումը: Այն գտնվում է միջպետական մայրուղուց ընդամենը 2-3 կմ հեռավորությամբ: Հանդիսանում է 8-9 տուրիստական երթուղիների խաչմերուկ, հարմար է ձկնորսության, ակտիվ հանգստի և ձմեռային մարզաձևերի կազմակերպման համար: Տուրիստական գոտու ստեղծումը հնարավորություն կտա 2-3 տարիների ընթացքում տարեկան անընդմեջ ընդունել 1000-1500 զբոսաշրջիկների, այդ թվում նաև ներքին տուրիզմի հաշվին:

Աղյուսակ 2. Մասնավոր հատվածի ընկերությունների ցանկը

Տնտեսական ակտիվության տեսակները	Ձեռնարկությունների թիվն ու %-ը (ըստ յուրաքանչյուր դասակարգման)			
	Միկրո	Փոքր	Միջին	Խոշոր
Ընդամենը ձեռնարկություններ	56	14		
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն	4			
Արդյունաբերություն	15	9		
Շինարարություն	2	1		
Փոխադրումներ, պահեստային տնտեսություն, փոստային և առաքման ծառայություններ	5			
Կացության և հանրային սննդի կազմակերպում				
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	1			
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	3			
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	1			
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն (ներառում է հաշվապահություն, ճարտարապետություն, ճարտարագիտություն,	4			

գիտահետազոտական գործունեություն, շուկայական ուսումնասիրություն, անասնաբուժական ծառայություններ)				
Վարչ. և օժանդակ ծառայություններ (վարձակալություն, լիզինգ, զբաղվածություն, զբոսաշրջային և ամրագրման գրասենյակներ, անվտանգության և հետաքննական ծառայություններ, վարչական ծառայություններ)	7			
Կրթություն		3		
Առողջապահություն և սոցիալական սպասարկում	1	1		
Մշակույթ, սպորտ, զվարճությունների և հանգստի ծառայություններ	5			
Այլ ծառայություններ	5			

	Բարձր շահութաբերությամբ ճյուղեր	Ցածր շահութաբերությամբ ճյուղեր
Համագործակցության հակված ճյուղեր 	Ռազմավարական ճյուղեր - Հյուրանոցներ - Այգեգործություն - Անասնապահություն - Տուրիզմ	Բարելավող ճյուղեր - Սննդարդյունաբերություն - Սպասարկման ոլորտ - Այգեգործություն - Մեղվապահություն
Համագործակցության չհակված ճյուղեր 	Հագեցած ճյուղեր - Մանրածախ առևտուր - Ռեստորանային ծառայություններ	Անհուսալի ճյուղեր - Անասնապահություն - Հացահատիկի արտադրություն

6.2 Տեղական համագործակցություն

Համայնքի տնտեսության մեջ տեղական համագործակցությունը շատ քիչ է: Լիարժեք չեն գործում: Մատնված են անգործության: Համայնքում կարիք կա զարգացնելու տեղական կարողությունները, բարձրացնել մարդկանց ներգրավվածությունը, որպեսզի համայնքը իր կարևոր դերակատարություն ունենան տեղական նախաձեռնությունների բացահայտման հարցում: Քանի որ ֆերմերների և տեղական այլ տնտեսվարողների միջև համագործակցությունը ցածր է, միավորումների և կոոպերատիվների կարողությունները՝ սահմանափակ, կարողությունների զարգացումը և դրան նպաստող գործիքաշարի ապահովումը, մասնագիտական հմտությունների զարգացումը առանցքային նշանակություն ունի համայնքի տնտեսության զարգացման համար:

Աղյուսակ 3. Տեղական գործընկերության գնահատում

Անվանումը և/կամ գործառույթը (ոլորտը/թեման, որի շուրջ գործընկերությունն աշխատում է)	Ներառված հաստատությունները/անձիք	Ձեռքբերումները (այսպեղ ցույց տվեք նաև, թե ինչպես է այն իրագործվում, օր.՝ պլանավորման փուլում, նախագծերի իրականացում, ծառայությունների	Գնահատական՝ օգտակար կամ ոչ օգտակար
---	---	--	---

		մատուցում, գործում է մշտական կամ ոչ մշտական/պարբերական հիմքերով)	
Համագործակցություն հյուրանոցային, հյուրատնային բիզնեսում	Հյուրանոցներ, Հյուրատներ	Ծառայությունների մատուցում, պարբերական հիմունքներով	օգտակար
Համագործակցություն քաղաքացիական կազմակերպություններ ի և ՏԻՄ-երի միջև	Հասարակական կազմակերպություններ մարզային, համայնքային և հանրապետական	Նախագծերի իրականացում, պարբերական հիմունքներով	օգտակար
Գյուղմթերքների արտադրություն, գյուղատնտեսական կոոպերատիվներ, վերամշակում	Արին, Ազատեկ, Զեդեա, Փոռ, բնակավայրերի հողօգտագործողներ, այգեգործներ	Համատեղ աշխատանքներ, պարբերական հիմունքներով	օգտակար

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
1.Տեղական համագործակցության առումով ընդգրկված են ՏԻՄ-ը, միջազգային դոնոր կազմակերպություններ /ԱՄՆ ՄԶԳ, Եվրոմիություն /, ՔՀԿ, կոոպերատիվներ:	1. Ներկայումս համայնքում առկա են տեղական համագործակցության անկայուն վիճակ, որն ունի խթանման կարիք: Չկա տնտեսության տարբեր ճյուղերում առկա ձեռնարկությունների հակվածությունը դեպի համագործակցությունը:
2. Համայնքում առկա են ակտիվ համագործակցող հասարակական կազմակերպություններ	2.Համայնքում չկա դեռևս որևէ միավոր /խորհուրդ/, որը կարող է իր վրա վերցնել համակարգողի դերը համագործակցությունը կայացնելու և զարգացնելու համար: Զգացվում է համայնքի սոցիալական հատվածի փոխվստահության մթնոլորտի բացակայություն

6.3 Բիզնեսին աջակցող, թափանցիկ և առանց կոռուպցիայի վարչարարություն

Համայնքապետարանի կողմից հայտարարվող բոլոր մրցույթները, աճուրդները հրապարակվում են կայքում և շահագրգիռ բոլոր կողմերը կարող են մասնակցել գնառաջարկների բացմանը: Համայնքում ստեղծվել է բավարար պայմաններ իրազեկ լինելու համայնքային ժողովների և հանրային քննարկումների մասին, մասնակցելու և ներկայացնելու առաջարկներ: Այդ նպատակով օգտագործվում է համայնքային պաշտոնական կայքը, իրականացվում են համայնքային լսումներ, ՔՀԿ ներքին ներգրավվածությամբ: Սակայն այս բոլորը բավական չէ թափանցիկ վարչարարության համար: Համայնքում գործող գործարարները պասիվ վերաբերմունք ունեն համայնքային տնտեսության կառավարման ներգրավվածության առումով:

Աղյուսակ 4 Զարգացման ոլորտները (ենթաօլորտներ) և նրանց խնդիրները

(Զարգացող) ոլորտ (ենթաօլորտներ)	Հիմնական խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է բիզնեսին աջակցությունը
--	--

Բոլոր ոլորտները (հորիզոնական)	
Գյուղատնտեսություն (անասնապահական, դաշտավարական, այգեգործական և խառը)	Տնտեսությունների (ընդհանուր տնտեսությունների ավելի քան 80%) ստեղծած արժեքը բավարարում է միայն ընդամենը կարիքները հոգալու համար: Մթերոլ ընկերությունները գերիշխող դիրքում են և թելադրում են գները: Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է միավորել գյուղատնտեսությամբ տնտեսություններին և հանդես գալ որպես մի ընդհանուր արտադրող՝ մեկ ընդհանուր բրենդով : Գյուղմթերքների ապրանքային տեսքը բավականին խղճուկ է և ոչ մրցունակ փաթեթավորմամբ: Անհրաժեշտ է ստեղծել ֆերմերային տեխնոլոգիաների կենտրոններ: Այստեղ համայնքը կարող է կազմակերպել գյուղատնտեսական պրոդուկտների բրենդավորման, գովազդի, վաճառքի խթանման, օրարերկրյա ներդրողների ներգրավման աշխատանքները:
Տուրիզմ (հյուրատնային Գործունեություն, սննդի սպասարկման ոլորտ)	Համայնքում աճում է հյուրատնային գործունեությունը, տուրիզմի գրավչությունը մեծացնելու համար անհրաժեշտ է ժամանցի կենտրոններ ստեղծել: Պետք է գյուղական բնակչությանը աջակցել ագրոտուրիզմ զարգացնելու համար: Այստեղ համայնքը կարող է իրականացնել դրամաշնորհային ծրագիր և համայնքում ստեղծել ու խթանել մինչև 10-12 հյուրատների ստեղծման և կազմակերպման աշխատանքները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
1.ՏԻՄ–ի կողմից բաց կառավարման միջավայրի առկայություն	1. ՏԻՄ –ի և մասնավոր հատվածի գործառնական երկխոսության սաղամնային վիճակ, ՏԻՄ –ի հեղինակության բարձրացման անհրաժեշտություն:
2.ՏԻՄ գործելաճի թափանցիկության ապահովում	2. Կոռուպցիայի, վարչարարության դեմ իրենց անհանդուրժողականության վերաբերյալ հասարակությունը, այդ թվում նաև բիզնես միջավայրը ունեն կամարտահայտության պասիվ դրսևորում

6.4 Ֆինանսական միջոցների հասանելիություն

Համայնքում աշխատում են երկրում գործող երկու բանկերի և 1 վարկային կազմակերպության
մասնաճյուղ: Գործող և սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն է առաջարկ նաև ՀՀ
ՓՄՁ ԶԱԿ–ի գրասենյակը:

Համայնքում գործող բանկերը տրամադրում են վարկեր փոքր և միջին ձեռնարկություններին մինչև
100 մլն դրամ (14%) գրավով և 10մլն. դրամ (15%) առանց գրավի: 2018թ.-ից ֆինանսական
աջակցություն /սուբվենցիաներ/ է տրամադրվում նաև կառավարությունից: Պետության կողմից
ներդրումային ծրագրերի դեպքում տրամադրվում է համաֆինանսավորում մինչև 60% տնտեսական և
40% սոցիալական ուղղվածությամբ ծրագրերի դեպքում: Առևտրային բանկերը գյուղատնտեսության
զարգացումը խթանելու նպատակով տրամադրում են գյուղատնտեսական վարկեր 5-6%
տոկոսադրույքով (տոկոսադրույքները սուբսիդավորվում են պետության կողմից): Համայնքում կան
գործող վարկային կազմակերպություններ, որոնք տրամադրում են վարկեր մինչև 2 մլն. դրամ
(տարեկան 24% տոկոսադրույքով):

ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսավորումն ապահովվում է գլխավորապես բանկային վարկավորման և նորաստեղծ ձեռնարկությունների ու գյուղմթերք արտադրողների համար նախատեսված հասցեական աջակցության միջոցով: Լիարժեք կայացած չեն ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրները, մասնավորապես, լիզինգային գործունեությունը: ՓՄՁ սուբյեկտների համար դա կարող է լինել բանկային ֆինանսավորման այլընտրանք՝ հաշվի առնելով գրավի առկայության և գնահատման ցածր գնի խնդիրները:

Աղյուսակ 5. Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն

Հաստատություն/դոնոր (ներառյալ՝ բանկեր և այլ վարկային կազմակերպություններ)	Հնարավոր հաճախորդներ/շահառուներ	Նախընտրելի տնտեսական ոլորտներ/գործունեություն	Հարկացվելիք գումարի նվազագույն և առավելագույն չափ	Պահանջներ (գրավ և այլն)
Ունիվերսալ վարկային կազմակերպություններ	Փոքր բիզնես	Գյուղատնտեսություն Առևտուր	100000-սկսած 10 մլն ՀՀԴ	Երաշխավոր Գրավ
Բանկեր	Փոքր, Միջին բիզնես	Բիզնեսի ընդլայնում	50000 ՀՀԴ-ից անսահմանափակ	Գրավ Երաշխավոր
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր, Միջին բիզնես	Աջակցություն սկսնակ բիզնեսին	1-5 մլն. դրամ	Գրավի բացակայություն, 5 տարի մարման ժամկետ, ճկուն մարման գրաֆիկ
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր, Միջին բիզնես	Գործող բիզնես, որն ընդլայնման ծրագիր	Վարկային երաշխավորություններ, արտոնյալ բանկային տոկոսադրույք	
Գյուղաջակցության հիմնադրամ	Փոքր, Միջին բիզնես, անհատներ	Գյուղատնտեսություն	1-5 մլն. ՀՀԴ	

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
1. Ֆինանսական ռեսուրսների ստացման ճկուն տարբերակներ	1. Վարկային կազմակերպություններում դեռևս առկա են բարձր տոկոսադրույքներ
2. Պետության կողմից աջակցություն սկսնակ և գործող ձեռնարկություններին	2. Շատ կազմակերպություններ չունեն վարկ վերցնելու հնարավորություն վարկային պատմության պատճառով:

6.5 Հող և ենթակառուցվածքներ

Մեծ պահանջարկ ունեն մայրուղու հարևանությամբ գտնվող գոտիները, որը կարելի է օգտագործել որպես հյուրատներ, զվարճանքի օբյեկտներ կառուցելու համար: Համայնքն ունի 12,250 ք.մ. համայնքային նշանակության շենք շինություններ, որոնցից օգտագործվում է 12,065 ք.մ.: Համայնքային ազատ շենք շինությունները կարող են ծառայել որպես գրասենյակային կամ առևտրատարածքներ փոքր և միջին ձեռնարկությունների համար:

Աղյուսակ 6. Վայք գյուղական բնակավայրերի հողային ենթակառուցվածքները

Համայնքներ	Շահառու տնտեսություններ	Մշակվող վարելահողեր/հա	Այգիներ /հա/	Չմշակվող հողեր /հա
Ազատել	180	440	130	300
Արին	47	28	100	40
Ջեղեա	60	100	109	100
Փոռ	70	130	19	90
Ընդամենը	358	950	358	530

Գյուղական բոլոր 4 բնակավայրերում բնակչությունը ամբողջությամբ ներգրավված է հողագործության, անասնապահության և պտղաբուծության մեջ: 350 տնային տնտեսությունների կողմից մշակվում է մոտ 1300 հա հող, որից 200 հա–ը տնամերձ հատվածներում: Չմշակվող հողերի հիմնական պատճառները հետևյալն են՝ բացակայում է գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկան, չկան եղանակային պաշտպանիչ միջոցների համակարգեր կարկուտից և ցրտահարությունից և այլն, տարածքներն ունեն ռելեֆային մասնատվածություն, քիչ են մարդկային ռեսուրսները, համայնքի գյուղատնտեսության մեջ չկան խոշոր ներդրողներ: Այս ամենով հանդերձ համայնքն ունի գյուղմթերքների արտադրության մեծ և չիրագործված պոտենցիալ:

Աղյուսակ 7. Հողի և ենթակառուցվածքների նկատմամբ մասնավոր հատվածի կարիքները

Մասնավոր հատվածի կարիքները՝ ըստ ենթակառուցվածքի տեսակի	Ոլորտում առկա պայմաններ	Հետագա հնարավոր կարիքներ (6 տարվա կտրվածով)	Հանրային սեփականություն/ վայրեր, որոնք կարելի է զարգացնել
Միկրո ընկերություն կամ անհատ ձեռներեցի աշխատատարածք՝ համատեղ օգտագործման ընդհանուր հարմարություններով կամ առանց դրանց	Առկա չէ	Անհրաժեշտ է	Մշակույթի պալատ
Գրասենյակային տարածք՝ համատեղ օգտագործման ընդհանուր հարմարություններով կամ առանց դրանց	Առկա է	Անհրաժեշտ է	Մշակույթի պալատ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
-------------------	-------------------

Համայնքում առկա են համայնքային սեփականություն հանդիսացող գրասենյակային տարածքներ որոնք կարող են տրամադրվել ձեռներեցներին	1.Առկա գրասենյակային տարածքներն ունեն ընթացիկ վերանորոգման կարիք
Համայնքը կարող է ապահովվել հողատարածք բիզնես գործունեություն իրականացնելու համար	2.Չկա համեմատաբար բարձր ակտիվություն, պահանջարկ, ենթակառուցվածքների, հողի նկատմամբ

6.6 Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ

Համայնքապետարանում ստեղծվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակ, ինչի արդյունքում բարելավվել են համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունները: Անհրաժեշտություն կա ունենալու հաշվապահական գրասենյակներ, որոնք կարող են աջակցել միկրո և միջին ձեռնարկություններին:

Կարգավորման ոլորտի մարտահրավերներ	Բացասական ազդեցության բարձր/ցածր աստիճան	Հիմնական կարգավորող մարմին	Խնդիրները տեղական մակարդակում մեղմելու/բարելավելու հնարավորություն (մանրամասներ)
Ներդրումներ իրականացնելու համար մեծ տոկոսադրույքներ	բարձր	ԿԲ, բանկեր, կառավարություն	ՏԻՄ –ի կողմից երաշխավորման հիմնադրամի ստեղծում և ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրում
Հաշվապահական հաշվառման վարման խնդիրներ սկսնակ գործարարների, միջին և փոքր ձեռներեցների համար,	բարձր	ՀՀ , ՊԵԿ	ՏԻՄ –ի օգնությամբ համայնքային նշանակության հաշվապահական գրասենյակի հիմնում, սկսնակ, փոքր և միջին գործարարների համար կենտրոնացած հաշվապահության վարում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
Պետության կողմից ձեռնարկատիրության գրանցման դյուրին ընթացակարգ	Չկա ներկայացված գործարար ծրագրեր, որոնք կհետաքրքրեն օտարերկրյա ներդնողներին: Չկա համայնքի այցեքարտը, բրենդը, որով նա կարող է ճանաչելի դառնալ:
Բարենպաստ հարկային դաշտ սկսնակ գործարարության համար	Չկա պետության կողմից տեղական տնտեսությանն ուղղված ֆինանսական աջակցություններ, որոնք կարող են ուղղվել համայնքում փոքր բիզնեսի զարգացմանը:

6.7 Հմտություններ և մարդկային կապիտալ, ներառականություն

Համայնքում պարբերաբար զգացվում է վաճառողների, մատուցողների, խոհարարների, մենեջերների, շինարարների, գյուղատնտեսների կարիք: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է աշխատուժի շուկայում իրականացնել մասնագիտական վերապատրաստումներ նշված մասնագիտությունների գծով: Համայնքում գործազուրկների թիվը 496 է, որից 299 կանայք են: 105 գործազուրկների միջին տարիքը 45-ից 54 է: Համայնքում պարբերաբար կազմակերպվում է աշխատանքի տոնավաճառներ, մրցույթներ, որի միջոցով հնարավոր է դառնում աշխատանք ապահովել հիմնականում 20-35 տարեկանների համար: Համայնքում առկա աշխատաշուկայում 60-70%-ն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն: Աշխատաշուկայի որակի վրա բացասաբար է ազդում նաև աշխատանքի միգրացիան՝ ինչպես ք. Երևան, այնպես էլ երկրից դուրս:

Աղյուսակ 8Ա. Որակավորված աշխատուժի շուկայում առկա իրավիճակը

Ոլորտ (Համաձայն Աղյուսակ 1-ի)	Ընթացիկ վիճակը որակավորված աշխատուժի շուկայում (օր՝ զգալի/որոշակի պակաս/անհամապատասխանություն/պահանջարկի գերազանցում)	Կանխատեսվող իրավիճակն ապագայում (օր՝ զգալի/որոշակի պակաս/անհամապատասխանություն/պահանջարկի գերազանցում)	Գործողությունների հնարավոր ուղղությունները
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն	Զգալի պակաս	Զգալի պակաս	Ինովացիոն տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ դասընթացներ
Արդյունաբերություն	Պահանջարկի գերազանցում	Պահանջարկի գերազանցում	Մասնագիտական վերապատրաստումներ
Շինարարություն	Զգալի պակաս	Զգալի պակաս	Արտագնա աշխատանքի մեկնողներին ավելի բարձր աշխատավարձով ապահովվում
Փոխադրումներ, պահեստային տնտեսություն, փոստ. առաքման ծառայություններ	Զգալի պակաս	Որոշակի պակաս	Մատուցվող ծառայությունների որակի բարելավում
Կացության և հանրային սննդի կազմակերպում	Պահանջարկի գերազանցում	Պահանջարկի գերազանցում	Օտար լեզվի դասընթացների կազմակերպում
Գյուղմթերքների վերամշակում	Զգալի պակաս	Զգալի պակաս	Ֆերմերային տեխնոլոգիական կենտրոնների ստեղծում:

Աղյուսակ 8Բ. Պահանջվող հմտությունների և զբաղվածության հնարավորությունների միջև հավասարակշռության ապահովումը տեղական մակարդակում. համակարգային վերլուծություն

Աշխատանքի ներկայիս մեթոդների առավելությունը	Կարևորության աստիճանը (1-5)	Աշխատանքի առկա մեթոդների թերությունները	Կարևորության աստիճանը (1-5)
Աշխատանքի ընտրությունն իրականացվում է զբաղվածության կենտրոնների միջոցով	3	քիչ մարդիկ են տեղեկացված զբաղվածության կենտրոնների առաջարկների վերաբերյալ,	5
Աշխատանքի ընդունման վերաբերյալ հայտարարություններ, թերթեր, վեբ կայքեր, տարբեր լրատվամիջոցներ	5	միջինից բարձր տարիքի մարդիկ քիչ են օգտվում էլեկտրոնային լրատվամիջոցներից	2
Համայնքում բանավոր հարցումների օգնությամբ, որը կազմակերպում է մասնագետ փնտրող կազմակերպությունը	5	Որոշումն իրականացվում է ոչ լայն շրջանակներում	4
Աշխատանքի ընտրությունն իրականացվում է զբաղվածության կենտրոնների միջոցով	3	Շատ քիչ մարդիկ են տեղեկացված զբաղվածության կենտրոնների առաջարկների վերաբերյալ	5
Աշխատանքի բարելավման հնարավոր ուղիներ			
Համայնքի տնտեսական զարգացման թիմի կրթություն և վերապատրաստում			

6.8 Արտաքին դիրքավորում և մարքեթինգ

Խորհրդային ժամանակներում ստեղծված Վայք համայնքը կրում է իր տիպին բնորոշ՝ հանրապետությունում ստեղծված նմանատիպ այլ քաղաքների ժառանգությունը: Համայնքը աչքի է ընկնում այդ ժամանակների ոճին հատուկ ճարտարապետական անհրապույր լուծումներով՝ անհրապույր շենքեր, կառույցներ, բազմատեսակ՝ ոչ համաչափ լուծումներով հարուստ շինություններ: Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը տեղի է ունենում արտաքին միջավայրի մշտական փոփոխությունների պայմաններում, որն իր հերթին պահանջում է համայնքում տարածքային մարքեթինգի իրականացում, որպես մարքեթինգի գործիք ընտրելով դիրքավորումը:

Արտաքին դիրքավորման վերլուծություն կատարելու համար հարցումներ են իրականացվել համայնքի ՏԻՄ ներկայացուցիչների, ՔՀԿ-ների, մշակույթի և կրթության ներկայացուցիչների, ուսանողների, տեղական բիզնեսի ղեկավարների, ձեռներեցների, ժուռնալիստների հետ:

Գծապատկեր 1 Արտաքին դիրքավորման անհրաժեշտ քայլերի իրականացում



Աղյուսակ 10. Համայնքի ընկալումը բնակիչների կողմից

Արտաքին կերպարի դրական կողմերը	Կարևորության աստիճանը (1-5)	Արտաքին կերպարի բացասական կողմերը	Կարևորության աստիճանը (1-5)
Համայնքի աշխարհագրական դիրքը /միջպետական մայրուղու առկայություն/	5	Համայնքն ընդգրկող բնակավայրերի անհամաչափ զարգացվածություն	4
Գյուղմթերքների րտադրության զարգացման լայն հնարավորություններ	5	Առկա շենք շինությունների բարեկարգման անհրաժեշտություն	5
Զարգացած սպասարկման ոլորտ	4	Համայնքի ներդաշնակ արտաքին տեսք	5
Բարենպաստ կլիմա	2	Համայնքի բրենդի անհրաժեշտություն	4
Տուրիստական երթուղիների հարևանություն	5	Համայնքում փառատոնների, տոների բացակայություն	4
Կայացած հյուրատներ, ժամանցի վայրեր	5	Համայնքի բրենդի, ներկայացման ձևավորում	4
Հյուրասեր և հարմարվող բնակչություն	3	Համայնքի բնակչության ակտիվության պակաս	4
Հնարավոր գործողություններ, որոնք կարելի է հեշտությամբ իրագործել			Պատասխանատու
Պետք է իրականացվի այնպիսի վարչարարություն, որպիսի նշանակալից ուշադրություն դարձվի համայնքի արտաքին տեսքի բարելավման վրա:			ՏԻՄ
Պետք է համայնքում կազմակերպել պարբերաբար մշակութային միջոցառումներ, փառատոններ և այլն, համայնքը գովազդելու և համայնք հյուրերի ներհուսքը ապահովելու համար:			ՏԻՄ
Պետք է ստեղծել հնարավորություններ, որպիսի իրականացվեն միջոցառումներ համայնքի դպրոցներում, մանկապարտեզներում , այլ վայրերում՝ սանիտարական բարձրակարգ մշակույթ ձևավորելու համար:			ՏԻՄ
ՈՒԺԵՂ ԿՈՂՄ		ԹՈՒՅՆ ԿՈՂՄ	
1.Աշխարհագրական դիրք		1. Բացակայում է համայնքի գրավչության կերպարը	

2.Կարողությունների լայն զարգացման ռեսուրսներ	2.Հանրային-մասնավոր համագործակցության, համատեղ ջանքերի պակաս
---	---

8. SWOT վերլուծություն

Ուժեղ	ԹուօՅԼ
- Տեսարժան վայրերի առկայությունը, տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման հնարավորությունները - Հայաստան-Իրան, Հայաստան Արցախ միջպետական ճանապարհ - Հողային և հանքային ռեսուրսների առկայությունը - Համայնքի բնակչության կազմակերպվածության բարձր մակարդակ - Համայնքում է գտնվում Հերիերի ջրամբարը	- Քաղաքի բրենդավորման բացակայություն - Արտագաղթի բարձր մակարդակ - Գործազրկության բարձր մակարդակ - Ներդնողների կողմից համայնքի տնտեսական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դժվարություններ - Ներդրումների և վարկային միջոցների պակասը
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՍՊԱՌՆԱԼԻՔ
